ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով փաստաբան **Սվետլանա Մերուժանի Կարապետյանի (արտոնագիր թիվ 2331)** նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) գլխավոր հաշվապահի **24.10.2023թ.** տեղեկանքի համաձայն՝ **փաստաբան (այսուհետ՝ Փաստաբան) Սվետլանա Կարապետյանի** (արտոնագիր թիվ 2331) անդամավճարի ընդհանուր պարտքը 24.10.2023թ. դրությամբ կազմում է 110.000 (մեկ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ որից վերջին 18 ամիսների համար՝ **2022թ. մարտից 2023թ. օգոստոս ամիսը ներառյալ, կազմում է 90.000 ՀՀ դրամ և վերջինս չի վճարել հերթական (սեպտեմբեր) ամսվա անդամավճարը:**

«Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջ առ այն, որ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներ են՝ ... փաստաբանի՝ սահմանած ժամկետում անդամավճար չվճարելու վերաբերյալ փաստաբանների պալատի հաշվապահի ներկայացրած տեղեկանքը*:

«Փաստաբանության մասին» օրենքի համաձայն՝

–Փաստաբանների պալատի խորհուրդը սահմանում է փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի ու այլ վճարների, փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու կարգեր **(Օրենքի 10-րդ հոդված, 4-րդ մաս, 6-րդ կետ).**

–փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ, բացառությամբ սույն օրենքով կամ փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված դեպքերի. **(Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ կետ):**

*– Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ ի թիվս այլնի, **Օրենքի պահանջների խախտումը**, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև **փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը**, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:* **(Օրենքի 39.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր):**

15 նոյեմբերի 2023թ.
թիվ 323-Ա/ԿԳ-23086

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 2.9.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:*

Պալատի խորհրդի 05.02.2014թ. 3/8-Լ որոշմամբ *փաստաբանի ամսական անդամավճարի չափը սահմանված է 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամ*, իսկ Պալատի խորհրդի կողմից 13.01.2023թ. թիվ 2/6-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանի անդամավճարների, հավակնորդների, փաստաբանի օգնականի մուտքի և այլ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու» կարգի (**այսուհետ՝ Կարգ**) 14-րդ կետի համաձայն՝ *փաստաբանները յուրաքանչյուր ամսվա անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:*

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ ... *Փաստաբանի անդամավճարը վճարելու պարտավորությունը լրիվ կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում <u>առաջին հերթին մարվում է</u> փաստաբանի համար ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունը՝ անկախ վճարման փաստաթղթում նշված նպատակից: Փաստաբանի անդամավճարի ժամկետանց պարտքի գումարը ինքնաշխատ ձևով միացվում է փաստաբանի անդամավճարի հերթական պարտքի գումարին և ենթակա է վճարման հերթական անդամավճարը վճարելու ժամկետում:*

Կանոնագրքի 9.1.3 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել առնվազն տասնութ ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ փաստաբանների պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի: Սույն ենթակետում նշված վճարումն ամբողջությամբ կատարելու դեպքում, Պալատի կարգապահական հանձնաժողովը փաստաբանի նկատմամբ կիրառում է նկատողություն կամ խիստ նկատողություն:*

Ներկայացված դրույթների համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ փաստաբանի համար, ինչը բխում է նրա կարգավիճակից, ամրագրվում է՝ ի թիվս այլնի, նաև սահմանած չափով և կարգով անդամավճարների մուծման պարտավորությունը:

Միաժամանակ, Պալատի ներքին իրավական ակտերում ամրագրվել և հստակեցվել են փաստաբանի կողմից անդամավճարների մուծման պարտավորության կատարման ապահովմանն ուղղված մի շարք դրույթներ՝ ինչպես անդամավճարների չափի ու վճարման կարգի ամրագրման, այնպես էլ դրանց վճարման պարտավորության չկատարմանն ուղղված վարքագծի բացառման վերաբերյալ:

Այս համատեքստում, եթե առնվազն 18 (տասնութ) ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանը չի կատարում հերթական ամսվա

անդամավճարի մուծման պարտավորությունը, այդ արարքի (վարքագծի) դրսևորումն Կանոնագրքի իմաստով փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցնելու հիմք է:

Տվյալ դեպքում, Փաստաբանը առերևույթ խախտել է վերոհիշյալ կանոնների պահանջները, քանի որ նրա անդամավճարի ընդհանուր պարտքը 24.10.2023թ. դրությամբ 110.000 (մեկ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ որից վերջին 18 ամիսների համար՝ **2022թ. մարտից 2023թ. օգոստոս ամիսը ներառյալ, կազմում է 90.000 ՀՀ դրամ և վերջինս չի վճարել հերթական (սեպտեմբեր) ամսվա անդամավճարը**:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի, 39.1-ին հոդվածի, 39.2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և մույն հոդվածի 5-րդ մասի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Փաստաբան **Սվետլանա Մերուժանի Կարապետյանի (արտոնագիր թիվ 2331)** նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ կետի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով (**կարգապահական գործ թիվ ԿԳ-23086**):

2. Տեղեկացնել փաստաբանին, որ՝ Կանոնագրքի 9.1.3 ենթակետի համաձայն՝ այն դեպքում, երբ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ փաստաբանների պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի, ապա Պալատի կարգապահական հանձնաժողովը փաստաբանի նկատմամբ կիրառում է նկատողություն կամ խիստ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման պատճենն ուղարկել փաստաբանին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Արմեն Ասատրյան

15 նոյեմբերի 2023թ.
թիվ 323-Ա/ԿԳ-23086
ք. Երևան